


ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրված արտադրանքի արտահանմանն աջակցության տրամադրման*



*) ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում է աջակցություն՝ իրենց կողմից արտադրվող ապրանքների համար արտահանվող երկրի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներմուծման և/կամ իրացման համապատասխանության սերտիֆիկատի կամ այլ համարժեք փաստաթղթերի ստացման համար կատարված ծախսերի 50%-ի չափով:

1. Կազմակերպությունն աջակցություն ստանալու համար հայտ (կից փաստաթղթերով) է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (Հասցե՝ Փետրվարի 20 փողոց, շենք 1):
2. Նախարարությունը հայտը ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է կազմակերպությանը հայտի բավարարման կամ մերժման մասին՝ հիմնավորելով մերժման պատճառները:
3. Հայտի բավարարման մասին տեղեկացումը ստանալու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը նախարարություն է ներկայացնում իր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:
4. Նախարարությունը պայմանագիրը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կնքում է պայմանագիրը և 1 օրինակը հանձնում կազմակերպությանը:

Արտահանմանն աջակցության հայտի ներկայացման կարգը տեղադրված է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կայքէջում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական քաղաքականության բաժին 94-73-78 հեռախոսահամարով: